ՀՀ ԶՈՒ-Ի ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ*

Ա. Բ. ԼՈՔՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ՊԿԱ հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր,
Ս. Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ՀՀ ՊԿԱ ասպիրանտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի սպառազինության ու ռազմական տեխնիկայի, այդ թվում՝ գերճշգրիտ զենքի, զորքերի կառավարման ավտոմատացված համակարգերի, պայքարի նոր ձևերի ստեղծմամբ ու զարգացմամբ պայմանավորված՝ ժամանակակից պատերազմները դարձել են կարճատև ու դինամիկ, էականորեն կրճատվել է որոշման ընդունմանն ու մարտական խնդիրների կատարմանը հատկացվող ժամանակը, փոփոխվել են կառավարման միջոցները, մեթոդներն ու ոճը, վերաիմաստավորվել պատերազմի արվեստը և ընդհանուր առմամբ ռազմական գործը[1]: Ներկայումս «ծանրության կենտրոն» են դառնում հակառակորդ պետության բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի մտավոր կարողություններն ու բարոյահոգեբանական վիճակը[2]: Այս հանգամանքները լրացուցիչ պահանջներ են դնում ճակատամարտում (մարտում) ներգրավված անձնակազմի վրա՝ նրանից ակնկալելով բարձր աստիճանի մշտական մարտա-

* Հոդվածն ստացվել է 26.01.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 20.04.2023:

[1] Տես *Գ. Վ. Տավարածյան,* Պաշտպանական բարեփոխումներն ու զինված ուժերի զարգացումը ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ: «ՀԲ», 2022, հմ. 3:

[2] Տես, օրինակ, *Elly Dolev.* Techniques and Examples of Psychological Warfare. “Journal of Forensic Psychology”, 2022, Vol. 7, Iss. 4 (https://www.walshmedicalmedia.com/open-access/techniques-and-examples-of-psychological-warfare.pdf); *Е. П. Борзова, А. А. Ковалев.* Ментальные войны как новый вызов современному миру. «Экономические и социально-гуманитарные исследования», 2022, № 4 (https://cyberleninka.ru/article/n/mentalnye-voyny-kak-novyy-vyzov-sovremennomu-miru/viewer): Արևմտյան ռազմագիտության մեջ նման պատերազմավարության եղանակը դիտվում է հոգեբանական պատերազմի տիրույթում, որը ներառում է մտավոր և հուզական ճակատներում մղվող ճակատամարտ:

պատրաստություն, շարժունություն, բոլոր ներուժային կարողություններն ակնթարթորեն լարելու և առավելագույնս գործարկելու ունակություն, մարտական գործողությունների պայմաններում նպատակամղված կերպով գործելու համար բարձր աստիճանի մարտական ակտիվության* ցուցաբերում և այլ ֆիզիկահոգեբանական ու մասնագիտական կարողությունների լիակատար դրսևորում:

Ռուստի մարտական գործողություններին զորքերի պատրաստման կարևոր խնդիրներից մեկը պետք է համարել մարտական ակտիվության ձևավորումը, ինչին էլ նվիրված է սույն ուսումնասիրությունը:

Մարտական ակտիվությունը մարտի պայմաններում զինծառայողների ֆիզիկական, մասնագիտական ու հոգեկան ռեսուրսները մոբիլիզացնելու և համապատասխան վարքագիծ ցուցաբերելու կարողությունն է, որը մեծապես կապված է տվյալ պահին անձնավորության հոգեֆիզիոլոգիական վիճակի, պահանջմունքների, համոզմունքների և ցանկությունների հետ[3]:

Սույն հոդվածի նպատակն է մեր կատարած հետազոտության արդյունքներով ներկայացնել զինծառայողի մարտական ակտիվության աստիճանի վրա ազդող գործոնները: Ըստ այդմ. 1) դիտարկել ենք զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող գործոնների վերաբերյալ որոշ ուսումնասիրություններ, 2) փորձագիտական հարցման և կոնտենտ վերլուծության** մեթոդներով պարզել ենք այն հիմնական գործոնները, որոնք անմիջականորեն ազդում են մարտի պայմաններում զինծառայողների (ժամկետային, շարքային, ենթասպայական և սպայական կազմերի) դրսևորած մարտական ակտիվության աստիճանի վրա:

ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Այժմ ուսումնասիրենք մասնագիտական գրականության մեջ ներկայացված՝ խնդրո առարկա պրոբլեմով կատարված հետազոտությունները, որոնցում հիմնականում առանձնացվում են հետևյալ արտաքին (սոցիա-

* Մարտական ակտիվություն է կոչվում առաջադրված խնդիրների կատարման ուղղությամբ զինծառայողների, ստորաբաժանումների, զորամասերի և ընդհանուր առմամբ զորքերի մարտական գործողությունների ինտենսիվության աստիճանը: Զորքերի մարտական գործողությունների բնութագրիչ, որը հակադիր է մարտական պասիվությանը (տես «Боевая активность». «Психологическая энциклопедия» (https://vocabulary.ru/termin/boevaja-aktivnost.html)):

[3] Այս մասին տես նաև «Факторы, определяющие боевую активность воинов» (https://studme.org/243930/psihologiya/faktory_opredelyayuschie_boevuyu_aktivnost_voinov); *Ա. Լոքյան, Ս. Բաղդասարյան*, «Մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների կիրառման առանձնահատկությունների և իմաստային տարբերակվածության շուրջ: «Արցախի գիտական հանդես», 2022, հմ. 3:

** Կոնտենտ վերլուծության *(content analysis)* մեթոդն ուղղված է փաստաթղթերի բովանդակության որակական և քանակական վերլուծությանը, որն իրականացվում է այդ փաստաթղթերում արտահայտված տարբեր գործոնների ու միտումների բացահայտման և չափման նպատակով (տես *Հ. Մ. Ավանեսյան,* Փորձարարական հոգեբանություն: Ռուսումնական ձեռնարկ: Ե., 2021, էջ 116):

լական ու մարտական) և ներքին (հոգեֆիզիոլոգիական ու հոգեբանական) գործոնները, ընդսմին.

1. *սոցիալական գործոններ.* զինվորների վրա դրանց ազդեցությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք հիմք են ծառայում նրանց վարքի լայն սոցիալական շարժառիթների և հաստատուն մարտական կողմնորոշումների ձևավորման համար: Փորձը ցույց է տալիս, որ զինծառայողների մարտական գործողությունների բնույթը (ակտիվ – պասիվ, անձնուրաց – ինքնապահպանողական և այլն) մեծապես կախված է տվյալ պատերազմի նկատմամբ ժողովրդի ունեցած վերաբերմունքից, դրա նպատակների կարևորության հասարակական ընկալումից[4]: Դա իր հերթին որոշվում է պատերազմի պատճառների կառուցվածքում (ազգային, սոցիալական, տնտեսական և այլ) շահերի ներկայացվածությամբ: Մարդկանց գիտակցության մեջ պատերազմի պատկերն ստանում է այս կամ այն հուզական գունավորումը՝ կախված այն բանից, թե որքանով հաջող, ում տարածքում են ծավալվել մարտական գործողությունները, և երկրի բնակչության որ մասն է ֆիզիկապես ու հոգեբանորեն ներգրավված դրանցում[5]:
2. *Մարտական գործոնները* մարտում զինծառայողների այս կամ այն հակազդումները, վիճակը, վարքը պայմանավորող փոփոխականների լայն սպեկտր են: Հետազոտության տվյալների հիման վրա առանձնացվել են հետևյալ գործոնները. մարտական գործողությունների տեսակը, պայմանները և ինտենսիվությունը, կիրառվող զենքի առանձնահատկությունները, պաշտպանության միջոցների հուսալիությունը, ժամանակային, բնաաշխարհագրական, եղանակակլիմայական պայմանները, կողմերի կորուստների ծավալն ու հարաբերակցությունը[6]: Այստեղ տեղին է նշել նաև Ն. Գոլովինի առաջ քաշած «զորքերի ամենամեծ բարոյական առաձգականության սահման» հասկացությունը, ըստ որի՝ որոշակի (25 %) վիրային կորուստներից հետո անձնակազմն այլևս ունակ չէ հաղթելու[7]: Մարտում զինվորի վարքի էական գործոն է մարտական գործողությունների ինտենսիվությունը: Պարզվել է, որ մեծ ինտենսիվությամբ մարտական գործողությունները նպաստում են զինծառայողների շրջանում հոգնածության արագ աճմանը և հոգեխոցվածքների ընդհա-

[4] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Ն. Ն. Գոլովին*, Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 1–2, *նույնի*՝ Պատերազմի հետազոտություններ, մաս 2: «Աշխատանքային տետրեր», 2021, հմ. 8, էջ 30–31:

[5] Տես *П. А. Корчемный и др.* Военная психология: методология, теория, практика. М., 2010, с. 104:

[6] Տես նույն տեղում, էջ 105–106:

[7] Տես *Ն. Ն. Գոլովին*, Պատերազմի հետազոտություններ, մաս 2: «Աշխատանքային տետրեր», 2021, հմ. 8, էջ 64:

նուր թվի աճմանը: Անձնակազմի մարտական գործունեության վրա անբարենպաստ ազդեցություն են գործում նաև կենսագործունեության ռիթմերի (ակտիվ գործունեության, քնի, հանգստի, կերակրի ընդունման և այլ ռեժիմներ) խախտումը, կլիմայական պայմանների հաճախակի փոփոխությունը, վատ եղանակային պայմանները և այլն[8]:

3. *Հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական գործոնների* շարքում, մասնավորապես, առանձնանում է նյարդային համակարգի տեսակը (ուժեղ, թույլ և միջին): Պարզվել է, որ մարտի բացասական գործոնների ուժգնացմամբ պայմանավորված իրադրությունն առաջ է բերում բուժօգնություն պահանջող լուրջ հոգեբանական խանգարումներ և, հետևաբար, որոշ ժամանակով, թույլ նյարդային համակարգ ունեցող զինվորների (զինծառայողների ընդհանուր թվակազմում դրանց թիվը մոտ 15 % է) մարտունակության լիակատար կորուստ: Նման պայմաններում միջին նյարդային համակարգ ունեցող զինվորների (ընդհանուր թվի մոտ 70 %-ը) մարտական ակտիվությունը նվազում է միայն որոշ ժամանակով: Ուժեղ նյարդային համակարգ ունեցող զինվորները (մոտ 15 %) չեն ենթարկվում բարդ իրադրության զգալի հոգեխոցիչ ազդեցությանը: Մարտական իրադրությունում և այլ արտակարգ իրավիճակներում զինվորների գործողությունների մշտադիտումը ցույց է տալիս, որ նրանց վարքն զգալի չափով կախված է խառնվածքի տեսակից: Այսպես. սանգվինիկները բարդ պայմաններում որոշումն ընդունում են արագ և գործում են համարձակ: Անհաջողության դեպքում նրանք իրենց վճռականությունը կորցնում են միայն կարճ ժամանակով, ապա արագորեն վերադառնում իրենց բնականոն վիճակին: Խոլերիկները խիզախություն և վճռականություն են դրսևորում գլխավորապես հուզական վերելքի վիճակում: Ուժերի անկման վիճակում նրանք ունակ են բնազդային վախի գերի դառնալու: Ֆլեգմատիկները ակտիվ ու խիզախ կերպով գործում են այն ժամանակ, երբ մանրակրկիտ նախապատրաստված են մարտական խնդրի կատարմանը: Նրանք օժտված են հուզական ապրումների կայունությամբ, համառությամբ և տոկունությամբ: Մելանխոլիկներն ունակ են ցուցաբերելու վճռականություն և ակտիվություն կարճ ժամանակահատվածում և աննշան դժվարությունների հաղթահարման ժամանակ[9]:

Մարտական վարքի հոգեբանական գործոնների մասին խոսելիս անհրաժեշտ է շեշտը դնել այն բանի վրա, որ զինվորը մարտի արտաքին պայմանների և բնածին բնազդների կույր գործիքը չէ: Նրա վարքը վճռականաբար ձևավորվում է անձնավորության ուղղվածության, բնավորության, բանականության, կամքի, հույզերի, ունակությունների առանձնահատկութ-

[8] Տես *Պ. Ա. Կորչյոմնի և ուրիշներ,* Նշ. աշխ., էջ 105–106:

[9] Տես նույն տեղում, էջ 106:

յունների ազդեցությամբ: Առանց դա հասկանալու անհնար է բացատրել, թե որտեղից են առաջ գալիս անձնազոհությունը, արդարացված ռիսկը, փոխօգնությունն այն դեպքերում, երբ, կարծես, պետք է գերակշռեր ինքնապահպանման բնազդը: Հենց գերիշխող շարժառիթներով ու մարտական փորձառություններով է պայմանավորված մարտիկի վարքը մարտի «երկրորդական» հոգեբանական գործոնների (վտանգ, հանկարծակիություն, անսպասելիություն, արագ փոփոխվող մարտական իրադրություն, ժամանակի և տեղեկույթի սղություն, բռնություն և այլն) ազդեցության դեպքում:

Ֆիզիոլոգիական գործոնների շարքում առանձնացվում է *մարտական ստրեսը:*

Մարտական ստրեսը, որը համակարգային ստրեսի տարատեսակ է, զինծառայողի օրգանիզմի ու հոգեկանի բնական արձագանքն է, դրանց համակարգային հակազդումները մարտական գործողությունների բացասական գործոններին, որոնցից առավել կարևորներն են կյանքի և առողջության դեմ ուղղված սպառնալիքները, հիմքային մարդկային արժեքների քայքայումը[10]*:* Մարտական իրադրության պայմաններում իր գոյությունը պահպանելու համար մարդը (մարտիկը) պետք է իր բոլոր կենսական ռեսուրսների մոբիլիզացմամբ «վերակառուցի իր էությունը (զգոնության և ակտիվության մակարդակները, հակազդումների արագությունը, վարվելակերպը, արժեքների և շրջապատի, մարդկանց, իր նկատմամբ վերաբերմունքի համակարգը) համապատասխան դրա պահանջների»[11]: Հենց այդ վերափոխումը՝ հարմարումը, կոչվում է մարտական ստրես:

Զինծառայողների մարտական վարքի սոցիալական, մարտական, ֆիզիոլոգիական և հոգեբանական գործոնները տարբեր ժամանակ գործում են տարբեր ուժգնությամբ, տարբեր եղանակներով: Զինծառայողները, որոնք տարբեր կերպ են ընկալում պատերազմի նպատակները, հակառակորդի, ծառայակիցների, հրամանատարների նկատմամբ ունեն տարբեր վերաբերմունք, մասնակցում են տարբեր տեսակի մարտերի, աչքի են ընկնում մարտական փորձով, նյարդային համակարգի տեսակով և այլն, տարբեր ձևով են ընդունում կյանքի համար վտանգավոր իրադրությունը[12]:

4. Մասնագիտական գրականության մեջ, մասնավորապես՝ «Զինվորական

[10] Տես ««Боевой стресс» назван фактором угрозы здоровью военнослужащих даже в мирное время». «Фармацевтический вестник», 28.09.2021 (https://pharmvestnik.ru/content/news/Boevoi-stress-nazvan-faktorom-ugrozy-zdorovu-voennoslujashih-daje-v-mirnoe-vremya.html); «Боевой стресс – памятка для военнослужащих» (https://onkto.ru/blog/psychometry/boevoj-stress-pamyatka-dlya-voennoslujashchikh):

[11] Տես «Боевой стресс и его психологические последствия». «Правовой уголок офицера», 31.10.2019 (https://voen-pravo.ru/komandirskaya-podgotovka/konspekty/voenno-politicheskaya-podgotovka/466/):

[12] Տես նույն տեղում, էջ 106–107:

հոգեբանություն» աշխատությունում, զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող *գործոնների թվում նշվում է նաև բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունը*, որը մարտի պայմաններում մեծապես ազդում է զինծառայողի հոգեվիճակի, կամքի, գործողությունների շարժառիթավորման վրա: Բացի այդ, որպես առանձին խումբ են դիտարկվում *էկոլոգիական և էրգոնոմիկական* (աշխարհագրական, բնակլիմայական, տեխնիկական) *գործոնները*, որոնց մասին տեղեկացվածությունը զինծառայողին հնարավորություն է տալիս մարտում գործելու ենթագիտակցաբար՝ մեքենայական արձագանքման մակարդակում, երբ սկսվում է հույզերի ու գիտակցության ներգրավվածությունը[13]:

5. Հայրենական հետազոտող Վ. Հ. Մարգարյանի դիտարկմամբ՝ զինծառայողի մարտական ակտիվության վրա էապես ազդում է մարտական իրավիճակին բնորոշ հանկարծակիության գործոնը, որի բացասական ներգործության դեմ որպես հոգեբանական պատնեշ են հանդես գալիս զինծառայողի հետևյալ մարտական հատկությունները.
   - զգոնությունը և մարտական պատրաստությունը,
   - կանխատեսումը և զգուշավորությունը,
   - հնարամտությունն ու մտածողության արագությունը,
   - հանդգնությունը և հանկարծակիությանը հակազդելու առանձնահատուկ փորձը, որը ձեռք է բերվում հոգեբանական պատրաստման և զորախաղերի ու զորավարժությունների ժամանակ[14]:

Մասնավորապես նա նշում է, որ թվարկված գործոնների մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու մարտական գործողությունների հոգեբանական օրինաչափությունները, զինծառայողի վարքի վրա դրանց ազդեցության աստիճանը, ինչպես նաև դրանց հաշվառմամբ մշակելու և ներդրելու հոգեբանական պատրաստման արդյունավետ համակարգ:

Ավարտելով մասնագիտական գրականության տվյալների այս համառոտ նկարագրումը՝ նշենք, որ մարտի պայմաններում իր մասնագիտական, հոգեբանական և ֆիզիկական ռեսուրսները մոբիլիզացնելու և նպատակային կերպով օգտագործելու զինծառայողի կարողության զարգացումը մի բարդ գործընթաց է, որը պայմանավորված է վերը թվարկված բազմաթիվ ու բազմազան գործոններին արդյունավետ հակազդման համար անհրաժեշտ հատկությունների ձևավորմամբ: Դրա հետ մեկտեղ զինծառայողների մարտական վարքի սոցիալական, մարտական, ֆիզիոլոգիական ու հոգեբանական գործոնները տարբեր իրավիճակներում և

[13] Տես *А. Г. Караяни, И. В. Сыромятников.* Военная психология. М., 2016, с. 63:

[14] Տես *Վ. Մարգարյան,* Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009, էջ 26, *նույնի*՝ Մարտական գործունեության արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական գործոնների հարաբերակցության հարցի շուրջ: «ՀԲ», 2010, հմ. 4:

տարբեր ժամանակներ գործում են տարբեր ուժգնությամբ, տարբեր մեխանիզմներով: Ընդ որում, դրանք կարող են դառնալ անհաղթահարելի խոչընդոտ, հոգեխոցման (հոգեկան տրավմայի) պատճառ կամ հակառակը՝ հոգեբանական ռեսուրս, որի շնորհիվ աճում են զինծառայողի մարտական հնարավորությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախքան բուն հետազոտության նկարագրությանն ու դրա արդյունքների վերլուծությանն անցնելը հարկ է նշել, որ մասնագիտական գրականության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մարտական ակտիվությունը պայմանավորող գործոնների ազդեցության աստիճանը մեծապես պայմանավորված է կոնկրետ մարտական իրադրությամբ, տվյալ իրավիճակում հայտնված մարտիկների հոգեվիճակով և այլ փոփոխական պարամետրներով, այսինքն՝ կրում է իրավիճակային բնույթ[15]: Ըստ էության, այս հանգամանքը խոչընդոտում է կոնկրետ հոգեբանական ուսումնասիրություններով հավաստի արդյունքների ստացմանը: Այս է պատճառը, որ մենք ընտրել ենք փորձագիտական հարցումների կոնտենտ վերլուծությամբ ընդհանրական արդյունքների ստացման եղանակը:

Մարտական պայմաններում զինծառայողի մարտական ակտիվության աստիճանի վրա ազդող գործոնները պարզելու նպատակով ընդունված կարգով կատարվել է փորձագիտական հարցում[16], որի չափանիշները մշակվել են հետևյալ հաջորդական փուլերով: Նախ. հարցերի մշակման ժամանակ հաշվի ենք առել վերը ներկայացված գործոնները, ապա կոնտենտ վերլուծության մեթոդով առանձնացրել ենք զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող այն գործոնները, որոնք առավել հաճախ են հանդիպում փորձագետների դիտարկումներում: Այնուհետև ձևավորել ենք փորձագետների այսպես կոչված հաստատութենական խումբ, որում ներգրավվել են հոգեբանության (4 հոգի), ռազմական (3 հոգի) ու ռազմաբժշկական (3 հոգի) ոլորտների 10 փորձագետներ, որոնք ունեն ծառայության և մասնագիտական աշխատանքի 10 տարուց ավելի ստաժ, գիտական աստիճան և կոչում:

Փորձագետների կարծիքների համադրության միջոցով կատարվել է քանակական և որակական կոնտենտ վերլուծություն, որի արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

[15] Տես, օրինակ, *Л. А. Китаев-Смык.* Организм и стресс: стресс жизни и стресс смерти. М., 2012, сс. 9–11, 26–27 (https://library.nusta.edu.ua/depository/Оцифрованідокументи/Организм и стресс. Стресс жизни и стресс смерти. Китаев-Смык Л. А.):

[16] Տես *Հ. Մ. Ավանեսյան,* Նշ. աշխ., էջ 167–169:

Աղյուսակ 1

ԿՈՆՏԵՆՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՄԲ ՈՐՈՇՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԸՍՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾՈՒԹՅԱՆ (n=10)

Գործոնների ազդեցության չափը	Գործոն	Նշում			Ընդհանուր ցուցանիշ (%)
		Հոգեբան-ներ	Զինվորա-կաններ	Զին. բժիշկներ	
ա) մեծ	Մարտական պատրաս-տականություն	3	3	2	80
	Հոգեֆիզիոլոգիական վիճակ	3	1	3	70
	Անձնային որակներ	4	2	1	70
բ) միջին	Կառավարման համա-կարգի արդյունավետութ-յուն	4	3	–	70
	Փոխվստահություն և փոխգործություն	1	3	2	60
	Զորահավաքային զորա-կոչով լրահամալրված զինծառայողների պատրաստվածություն	–	3	2	50
	Տեղեկույթի ճշգրտություն	2	2	1	50
	Բացասական տեղեկու-թահոգեբանական ներգործությունից պաշտպանվածություն	2	3	–	50
	Շարժառիթավորում	1	1	2	40
գ) փոքր	Իրավիճակի անորոշություն	–	2	–	20

Այժմ աղյուսակում ներկայացված քանակական արդյունքների հիման վրա կատարենք որակական վերլուծություն: Ինչպես տեսնում ենք, փորձագետների գնահատումներում մարտական պատրաստականությունը գնահատվում է որպես զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող առավել կարևոր գործոններից մեկը:

Մարտական պատրաստականություն *(боевая выучка, warfare skills).* սահմանվում է որպես «զորքերի (ուժերի) գիտելիքների ու հմտությունների, բարոյահոգեբանական ու ֆիզիկական հատկությունների համալիր, ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների, կառավարման մարմինների ուսումնավարժվածությունն ու ներդաշնակվածությունը և կարողությունը՝ մարտական գործողություններ վարելու իրադրության ցանկացած պայմաններում կամ կատարելու այլ խնդիրներ՝ ըստ իրենց նախանշանակման»[17]: Մարտական պատրաստման արդյունքն է, որը հետևողականորեն

[17] Տես *Դ. Ս. Չիլինգարյան. Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմին-

ձեռք է բերվում զինծառայողների անհատական պատրաստման և մարտական պայմանները առավելագույնս նմանարկող իրադրությունում անցկացվող պարապմունքների, վարժանքների, մարզումների ու զորավարժությունների ընթացքում կազմակերպվող՝ ստորաբաժանումների, զորամիավորումների ներդաշնակման շնորհիվ: Ըստ այդմ մարտական պատրաստման արդյունավետ կազմակերպմամբ հնարավոր է բարձրացնել անձնակազմի մասնագիտական պատրաստության մակարդակը (որի կարևորագույն բաղկացուցիչներն են մարտական, բարոյահոգեբանական ու ֆիզիկական պատրաստությունները), հարստացնել նրա տեսական գիտելիքները, գործնական ունակությունները, դաշտային վարժվածությունը և ամրապնդել մարտական ոգին, ապահովել կարգասիրությունն ու պատշաճ հոգեֆիզիոլոգիական վիճակը[18]: Այս ամենի շնորհիվ հնարավոր է զարգացնել զինծառայողների ֆիզիկական ու հոգեկան դիմադրողականությունը, տոկունությունը, ստրեսածին ու հոգեխոցիչ մարտական գործոնների ազդեցությունն ավելի արագ ու սակավ հետևանքներով հաղթահարելու կարողությունը, մեծ մարտական ակտիվություն դրսևորելու ունակությունը, խուճապային հոգեվիճակներից զերծ մնալու ներուժը:

Անշուշտ ստրեսային իրավիճակներին «կուլ չգնալու» և մարտական ակտիվությունը պահպանելու տեսակետից հույժ կարևոր են նաև զինծառայողի անձնային հատկությունները (որակները), քանի որ դրանք այն գործոններն են, որոնք մարտիկին հնարավորություն են տալիս հաղթահարելու ինքնապահպանման բնազդի ազդեցությունն ու վախերը, կառավարելու իր վարքը, արդյունավետ կերպով ձեռք բերելու մասնագիտական գիտելիքներ, ընդունելու ճիշտ որոշումներ, պահպանելու զգոնությունն ու աչալրջությունը[19]: Այսպես. հայտնի է, որ ինքնապահպանման բնազդը մարտիկին ստիպում է խուսափել մարտից, և դրա ազդեցության դեմ հնարավոր է արդյունավետ կերպով պայքարել միայն հետևողական ու նպատակամղված աշխատանքով, որի շնորհիվ նրա մեջ կարմատավորվեն այնպիսի անձնային հատկություններ, համոզմունքներ, շարժառիթներ, հոգեկան պոռթկումներ, որոնք, գործելով ենթագիտակցականի ու հուզականի մակարդակով, լիովին կչեզոքացնեն բնազդային մղումները[20]:

ների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 491:

[18] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Ի. Ժ. Մաթևոսյան,* ՀՀ Զինված ուժերի մարտունակության և մարտական պատրաստության ապահովումը՝ որպես պաշտպանական բարեփոխումների գերակա խնդիր: «ՀԲ», 2009, հմ. 1–2:

[19] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Լ. Պ. Արտիշչև,* Մարտական իրադրությունում անձնակազմի հուզական անկայունության կանխման հարցի շուրջ: «ՀԲ», 2001, հմ. 4, նաև՝ *Ն. Ն. Գոլովին,* Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 1–2, *Ն. Ռ. Հակոբյան, Ա. Գ. Խաչատրյան,* Բնակչության շրջանում բարոյահոգեբանական աշխատանքների կազմակերպման որոշ առանձնահատկություններ: «ՀԲ», 2021, հմ. 3:

[20] Տես *Ն. Ն. Գոլովին,* Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 1–2:

Ընդսմին անհրաժեշտ անձնային որակներ ձևավորելիս պետք է ձգտել նաև վերացնելու այն հատկությունները, որոնք մարտիկին խանգարելու են մարտերում, ինչպիսիք են՝ անվճռականությունը, պարտքի նկատմամբ անտարբերությունը, անկազմակերպվածությունը, դյուրագրգռությունը, իմպուլսիվությունը, թուլակամությունը և այլն[21]:

Վերջին մի քանի տասնամյակներում ավելի ու ավելի մեծ տեղ է տրվում կառավարման համակարգի զարգացմանը, քանի որ մարտական գործողությունների ինտենսիվության և արագընթացության կտրուկ աճումը, ստորաբաժանումների ու զորամասերի գործողությունների ինքնուրույնության աստիճանի մեծացումը (անցումը առաջադրանքային կառավարման համակարգին[22]), այդ թվում՝ ցանցակենտրոն պատերազմավարության[23] տարածումը, նոր պահանջներ են ներկայացնում ինչպես ընդհանուր առմամբ կառավարման համակարգին, այնպես էլ բոլոր մակարդակների հրամանատարներին և առանձին մարտիկներին: Այդ պահանջների թվում են տարաբնույթ բարդ իրավիճակներում արագ կողմնորոշվելու և դրանք գնահատելու, տարբեր իրավիճակներում ճիշտ վարքի մոդելներ ընտրելու, տեղեկույթի մեծ հոսքերից անհրաժեշտ տեղեկություններն արագ առանձնացնելու, վերլուծելու և դրա հիման վրա արագորեն ճիշտ որոշումներ կայացնելու նրանց ունակությունը, տարաբնույթ զգայարարների ու արագագործ ԿԱՀ-երի լայն կիրառումը և այլն:

Ժամանակակից մարտերում էական դեր են խաղում նաև ստորաբաժանումներում մարտիկների միջև փոխվստահության և փոխգործության ապահովումը: Այն ներառում է իր հրամանատարների և մյուս գործընկերների, իր զենքի հզորության նկատմամբ մարտիկների վստահությունը, ինչը զինվորական (զենքի) եղբայրության, փոխադարձ օգնության և աջակցության, թիմային ոգին պահպանելու, նպատակաուղղված և ներդաշնակորեն գործելու, ինչպես նաև համածառայակիցներին մենակ չթողնելու, փախուստի չդիմելու երաշխիքներից է[24]:

Ժամանակակից պատերազմը ոչ միայն զինված բախում է, այլև բացասական տեղեկութահոգեբանական ներգործության լայն կիրառում: Հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից ԶՈՒ-ի անձնակազմի բարձր մակարդակի պաշտպանվածությունը նրանց արդյու-

[21] Տես *Զ. Դ. Ասատրյան*, Ռազմական ոլորտում մասնագիտական գիտելիքների և անձնային հատկությունների համալիր գնահատման հարցի շուրջ: «ՀԲ», 2022, հմ. 4:

[22] Տես *James D. Sharpe Jr., Thomas E. Creviston.* Understanding mission command. “Army sustainment magazine”, July–September 2013 (https://www.army.mil/article/106872/understanding_mission_command):

[23] Տես, օրինակ, *Jonjo Robb.* Modern Militaries and Network Centric Warfare Approach. “E–International Relations”, 9 January 2014 (https://www.e-ir.info/2014/01/09/modern-militaries-and-a-network-centric-warfare-approach/); *Է. Կ. Սարկիսյան, Ա. Զ. Պետրոսյան,* Ցանցակենտրոն պատերազմը որպես նոր ձևի կազմակերպվածք և կառավարման նոր համակարգ: «ՀԲ», 2022, հմ. 1:

[24] Տես *Պ. Ա. Կորչյոմնի և ուրիշներ,* Նշ. աշխ., էջ 105:

նավետ և ակտիվ գործունեության կարևոր նախապայմաններից է: Ընդսմին, այդ բացասական ներգործությունը, որը տեղեկատվական պատերազմի հիմնական բաղադրիչն է, ներգործում է նաև ընդհանրապես բնակչության վրա՝ ստեղծելով ընդհանուր տրամադրվածություն, որն, իր հերթին, կարող է ԶՈՒ-ում ձևավորել համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտ:

Մեր հետազոտությունում ներգրավված փորձագետների կարծիքով՝ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել զորահավաքային զորակոչով բանակի կազմում ընդգրկված զինծառայողների ռազմական ուսումնավարժվածության ու զինվորական դաստիարակվածության մակարդակներին, քանի որ նրանք հաճախ չեն համապատասխանում ժամանակակից մարտերի պահանջներին, չունեն բավարար մարտական ու մասնագիտական պատրաստականություն, հոգեբանական կայունություն, ենթակա են խուճապային տրամադրությունների, ինչը խիստ բացասաբար է ազդում տվյալ կազմավորման մարտունակության վրա և կարող է դառնալ մեծ անհաջողության պատճառ[25]:

Զինծառայողների մարտական ակտիվության կարևոր նախապայմաններից է նաև նրանց շարժառիթավորումը, որը պահանջում է երկարատև աշխատանք: Հետևաբար կարևոր է ոչ միայն այն, թե զինծառայողը ինչպիսի մարտական պատրաստում է անցել, այլև նրա ամբողջ սոցիալականացման ժամանակ ինչպիսի հիմնարար շարժառիթներ են ձևավորվել, որոնք կարող են դրսևորվել յուրաքանչյուր իրավիճակում՝ հանգեցնելով մարտական ակտիվության և այլ դրական սոցիալական գործողությունների:

Հույժ կարևոր հանգամանք է նաև իրադրության անորոշությունը, որն ուղղակիորեն առնչվում է տեղեկույթի անբավարարության հետ: Ընդհանուր առմամբ անորոշությունը մեկնաբանվում է որպես պայմանների վերաբերյալ տեղեկությունների «Անհայտություն, անհստակություն, անարժանահավատություն, կասկածելիություն, անբավարարություն, ցածր մակարդակի կանխատեսելիություն, կանխագուշակելիություն, որպես մի իրադարձություն կամ գործոն, որի ելքը կախված է ապագա իրադարձություններից, որոնք սուբյեկտն ուղղակիորեն չի վերահսկում»[26]: Դա առաջ է բերում գործողությունների անվճռականություն, վարանողականություն իր ուժերի և ապագա զարգացումների բարենպաստության նկատմամբ անվստահություն և կարող է հանգեցնել սխալ որոշումների ընդունման, մեծ կորուստների և, որպես արդյունք, ծանր պարտության: Այստեղ տեղին է բերել նաև ամերիկացի ռազմական հոգեբան Պ. Մոկորի այն դիտարկումը, որ անհրաժեշտ տեղեկույթի պակասը կարող է առաջ բերել մարտի դաշտում հոգեկան անհավասարակշռություն, անվստահություն, կասկածամտություն[27]:

[25] Տես, օրինակ, «Почему Красная армия теряла больше людей, чем вермахт», 21 июня 2017 (https://www.vedomosti.ru/opinion/articles/2017/06/22/695479-krasnaya-armiya):

[26] Տես *С. Л. Соловьева.* Выживание в условиях неопределенности. «Психологическая газета», 23 апреля 2020 (https://psy.su/feed/8116/):

[27] Տես *П. Х. Мокор.* Военная психология и реальность боя. «Современная буржуазная военная психология». М., 1964, с. 56:

Մեր կարծիքով՝ անորոշությունն անմիջականորեն կապված է նաև անսպասելիության ու հանկարծակիության հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից մարտական գործողություններն առանձնանում են մեծ արագընթացությամբ և ինտենսիվությամբ: Դա որոշակի լուրջ պահանջներ է ներկայացնում այդ գործողություններին մասնակցող անձնակազմին՝ ինչպես տարբեր մակարդակների հրամկազմին, այնպես էլ շարքային մարտիկներին: Տվյալ պահանջներից մեկը նրանց մեծ մարտական ակտիվությունն է, որը պետք է շարունակաբար ու գիտակցաբար դրսևորվի ամբողջ մարտի ընթացքում:

Մեր ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

- մարտական ակտիվությունը պայմանավորող գործոնները լինում են արտաքին (սոցիալական ու մարտական) և ներքին (հոգեբանական ու հոգեֆիզիոլոգիական), ընդսմին դրանց շարքում առանձնանում է մարտական պատրաստականության և անձնային որակների, ինչպես նաև արդյունավետ կառավարման դերը,
- մարտական ակտիվությունը պայմանավորող գործոնների ազդեցության տեսակարար կշիռը կրում է գերազանցապես իրավիճակային բնույթ, թեև նկատելի են որոշակի օրինաչափություններ,
- մարտական ակտիվությունը պայմանավորող գործոնների որոշարկումը հնարավորություն է տալիս մշակելու զինծառայողների մարտական պատրաստման այնպիսի մեթոդիկաներ, որոնք ապահովում են մարտիկի ավելի բարձր մարտական ակտիվությունը, հարմարվողականությունը և ստրեսակայունությունը, ինչն արդեն ձեռնարկվում է աշխարհի մի շարք առաջատար պետություններում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.

- մշակել մարդու՝ որպես մարտիկի հոգեկան-հոգեբանական նկարագրի լայնամասշտաբ հետազոտությունների միասնական ծրագիր՝ տարբեր ոլորտների (հոգեբանություն, բժշկություն, ֆիզիոլոգիա, սոցիոլոգիա, ռազմագիտություն և այլն) մասնագետների ներգրավմամբ: Սույն ծրագրի մշակման ժամանակ հաշվի առնել հայ մարդու հոգեկերտվածքը, պատերազմի վարման եղանակներն ու միջոցները և դրանցով պայմանավորված սպառնալիքների բնույթը,
- տվյալ հետազոտությունների ընդհանրացված արդյունքների հիման վրա մշակել ռազմակրթական, մարտական պատրաստման և բնակչության ռազմաուսուցման ծրագրեր:

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

ФАКТОРЫ, ОБУСЛОВЛИВАЮЩИЕ СТЕПЕНЬ БОЕВОЙ АКТИВНОСТИ ВОЕННОСЛУЖАЩИХ ВС РА. ЭКСПЕРТНАЯ ОЦЕНКА

А. Б. ЛОКЯН, доктор психологических наук, профессор кафедры психологии и политологии Академии государственного управления РА;
С. М. БАГДАСАРЯН, аспирант АГУ РА, ученый-аналитик Центра исследований стратегического руководства и управления НИУО МО РА

РЕЗЮМЕ

Современные боевые действия отличаются высокой интенсивностью и скоротечностью, что предъявляет определенные требования к участвующему в этих действиях личному составу. Одним из важнейших в их ряду является требование способности постоянно проявлять высокую боевую активность. Следовательно, одной из важнейших задач подготовки войск к боевым действиям является формирование боевой активности.

Исследования показывают, что факторы, обусловливающие боевую активность, бывают внешними (социальными и боевыми) и внутренними (психологическими и психофизиологическими), при этом особая роль отводится как боевой выучке и личностным качествам, так и эффективности управления. И хотя удельный вес влияния отдельных факторов, обусловливающих боевую активность, носит преимущественно ситуативный характер, однако наблюдаются и общие закономерности. Данное обстоятельство позволяет разработать такие методики боевой подготовки военнослужащих, которые бы обеспечивали повышение боевой активности, адаптивности и стрессоустойчивости бойца, что уже предпринимается в ряде ведущих государств мира.

На основе контент-анализа результатов проведенного авторами экспертного исследования ими выработан ряд предложений по организации в ВС РА процесса повышения уровня боевой активности военнослужащих, включая разработку единой программы широкомасштабных исследований перспективного психико-психологического портрета военнослужащих с учетом национального менталитета и психоэмоционального облика армянина, способов и средств ведения современных войн, а также характера генерируемых ими угроз. Кроме того, рекомендуется на основе обобщенных результатов этих исследований разработать программы военного образования и боевой подготовки военнослужащих и военного обучения населения.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

FACTORS UNDERLYING THE DEGREE OF COMBAT ACTIVITY OF THE MEMBERS OF THE RA ARMED FORCES: EXPERT REVIEW

A. B. LOKYAN, Doctor of Psychological Sciences, Professor, Chair of Psychology and Political Science, Public Administration Academy of the Republic of Armenia;
S. M. BAGHDASARYAN, Graduate Student, PAARA, Research Fellow, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

SUMMARY

Modern combat operations are distinguished by high intensity and fluidity, which imposes certain requirements for the personnel involved in those operations. Among them the requirement to be able to constantly show high combat activity is one of those most important. Hence, one of the key tasks of the troops training for combat operations is the shaping of the combat activity.

Research suggests that the factors underlying the combat activity, may be external (social and combat) and internal (psychological and psychophysiological), albeit, special role is given to both the warfare skills and personality traits, and the management effectiveness, likewise. Moreover, although the specific weight of the influence of individual factors underlying combat activity is to a large extent inherently situational, however, common patterns are also observed. This circumstance facilitates the development of such technique of servicemen's combat training providing for the enhancement of a fighter's combat activity, adaptability and stress resistance. Suchlike methodology is already initiated in a number of world leading states.

Based upon the content analysis of the results yielded by the expert research carried out by the authors, a number of recommendations have been elaborated on the organization of the process of increasing the combat activity of servicemen in the RA Armed Forces, including the joint program development for large-scale study of perspective mental and psychological profile of servicemen. It should be carried out with the account of the national mentality and psycho-emotional image of an Armenian, the ways and means of modern warfare, as well as the character of threats generated by them. Besides, resting on the generalized results of these studies, the authors recommend designing programs in military education and combat training for servicemen, and in combat training for the civilians.